## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**13.06.2019թ. կնքված N <<ՉՀ-ԳՀԱՇՁԲ-19/2-2>> գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

ք. Չարենցավան <<30>> 08 2019թ.

Չարենցավանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Հ. Կ. Շահգալդյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ <<Պատվիրատու>>, մի կողմից, և <<Էն Շին>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Իսրաեյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ <<Կապալառու>> մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 13.06.2019թ. կնքված N <<ՉՀ-ԳՀԱՇՁԲ-19/2-2>> գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ, 8.6-րդ կետերը, պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 15.08.2019թ.-ին ներկայացրած թիվ 2641/04 զեկուցագիրը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1 13.06.2019թ. կնքված N <<ՉՀ-ԳՀԱՇՁԲ-19/2-2>> գնման պայմանագրի գինը ավելացնել 450000 (չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով, ընդ որում՝ ընդհանուր պայմանագրի գինը կկազմի 5049960 (հինգ միլիոն քառասունինը հազար ինը հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն:

1.2 13.06.2019թ. կնքված N <<ՉՀ-ԳՀԱՇՁԲ-19/2-2>> գնման պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետները երկարաձգել և վերջնաժամկետ սահմանել մինչև 2019 թվականի սեպտեմբերի 10-ը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**<<ՊԱՎԻՐԱՏՈՒ>>**
**Չարենցավան համայնք**
**ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1**
**ՀՀ ՖՆ ԳՎ**
**Հ/Հ** 900132172017
**ՀՎՀՀ 03022497**

**Համայնքի ղեկավար**
**Հ. Կ. Շահգալդյան**

(ստորագրությունը)

Կ.Տ

**<<ԿԱՊԱԼԱՌՈՒ>>**
**<<Էն Շին>> ՍՊԸ**
**ք. Երևան, Անտառային** 170
**<<Ամերիաբանկ>> ՓԲԸ**
**Հ/Հ** 1570027388370100
**ՀՎՀՀ** 02664949
**Էլ. փոստ՝** mksveta32@mail.ru
**Հեռ.** (093) 70-00-01

**Տնօրեն՝ Հ. Իսրաեյան**

(ստորագրությունը)

Կ.Տ